

# Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցի Հայաստանաց

## ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CHURCH

6700 WEST DIVERSEY AVENUE, CHICAGO, ILLINOIS 60635 TEL: (312) 637-1711

### ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հովիւին Տարած Աշխատութեանց

Յունուար 1, 1986 - Դեկտեմբեր 31, 1986

- Ս. Պատարագի Մատուցում ... Եիբակո 43, Վորիկըն 2 .  
 Մասնաւոր ծամերգութիւններ .. Եիբակո 15, (Արեւազալի եւ աւուր պատշաճի).  
 Մկրտութիւն ..... Եիբակո 8.  
 Ամուսնութիւն ..... Եիբակո 1.  
 Յուղարկաւորութիւն ..... Եիբակո 11, Այովա 1.  
 Հոգեհանգիստ ..... Եիբակո 19 (Փափաքուած 31 ընտանիքներու կողմէ).  
 Այցելութիւններ ..... Տնօրինէք 44, Հիւանդանոց 22, Մասնաւորի: 16, Գերեզմանատուն 4, Մեռելոցի (Մէմօրիալ Տէյ) 1.  
 Ժողովներու Մասնակցութիւն ... Ժխական Խորհուրդ 20, Երէց Տիկնանց Օժանդակ Յանձնախումբ 10, Երիտասարդ Տիկնանց Օժանդակ Յանձնախումբ 6, Երէց Երիտասարդաց կազմակերպութիւն 1, Կրտսեր Երիտասարդաց կազմակերպութիւն 1, Կիրակնօրեայ Դպրոցի 8, Դպրաց Դասու 8, Երգչախումբի Փորձեր 11, Ապրիլ 24 ի հանդիսութեանց Յանձնախումբի 2, Փիքնիքի 4, Երեք Համայնքներու Ս. ծննդեան ծրագալոյցի հանդիսութեանց Յանձնախումբ 4, Միջինարեւմուտքի Կիրակնօրեայ Դպրոցներու ժողովի Վորիկըն 1, Ժողով մը Գումարուած Հոգեշնորհ Տէր Խաժակ Վրդ. Պարսամեանի, Պրն ֆրէնկ Աւագեանի, Միջին արեւմուտքի Հոգեւորականաց Դասուն եւ Եկեղեցւոյ Տիկնանց Միութեանց մասնակցութեամբ Ս. Եկեղեցւոյս մէջ, Կիրակնօրեայ Դպրոցի Գիրքերու հարցին շուրջ:  
 Բացառիկ Ձեռնարկներ ..... Յունուար 5, 1986 Կիրակի Ս. Եկեղեցւոյս մէջ երեք համայնքներու Սրբոց Յովակիմ եւ Աննա, Սուրբ Յակոբ, եւ Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցիներու մասնակցութեամբ, Ս. ծննդեան ծրագալոյցի Ս. Պատարագ մատուցանեց թեմիս Բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տէր Թորգոմ Սրբազան Արքեպիսկոպոս Մանուկեան, Ս. Պատարագէն յետոյ, ճաշ տրուեցաւ: Եկեղեցւոյս սրահին մէջ յայտագրով մը, հոժ քազմութիւն մը ներկայ գտնուեցաւ, սրահին անբաւարութեան պատճառաւ շատեր չի կրցան մասնակցիլ սրահին մէջ տրուած ճաշկերոյթին:  
 Մարտ 18, 1986 երեք համայնքներու Սրբոց Յովակիմ եւ Աննա, Սուրբ Յակոբ, Եւ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցիներու մասնակցութեամբ Արքուհիներու Օր Տօնուեցաւ Ս. Եկեղեցւոյս մէջ, եւ հիւրասիրութիւն տեղի ունեցաւ սրահին մէջ:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցի Հայաստանաց  
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CHURCH

6700 WEST DIVERSEY AVENUE, CHICAGO, ILLINOIS 60635 TEL: (312) 637-1711

էջ 2

Բացառիկ Չեոնարկներ . . . . . Մայիս 18, 1986 Հոգեգալուստի Կիրակի  
Հոգեշնորհ Տէր Խաժակ Վրդ. Պատրաստան  
Ս. Պատարագ մատուցանեց Ս. Եկեղեցւոյս մէջ,  
որուն յաջորդեց ընդունելութիւն մը եւ  
ճաշկերոյթ սրահին մէջ, ի պատիւ Եկեղեցւոյս  
Երէց Տիկնանց Օժանդակ Յանձնախումբի  
(Մայրերու օրուայ առթիւ)։

Մայիս 2, 1986 Ամերիկայի Հայաստանաց  
Եկեղեցւոյ Դպրաց Դասերու Միութեան 40րդ  
համագումարի առիթով հանդիսութիւններ տեղի  
ունեցան Շիրակօ Օհէր մէրիեաթ Կանդուկի եւ  
Եկեղեցւոյս ներքնապարահին մէջ, եւ նաեւ  
նախագահութեամբ թեմիս Բարեխնամ Առաջնորդ,  
Գերաշնորհ Տէր Թորգոմ Սրբազան Արքեպիսկոպոս  
Մանուկեանի Ս. Պատարագ մատուցանեց Ս. Էջմիածնայ  
Միաբաններէն Հոգեշնորհ Տէր Հայկազուն  
Վրդ. նաճարեան։

Փետրուար 15, 1986 Եաբաթ Երեկոյան Հայրենի  
ծանօթ Գրողներէն Բժիշկ Զորի Բալաեան  
Բանախօսութիւն մը տուաւ հոժ քազմութեան մը,  
առջեւ Եկեղեցւոյս սրահին մէջ։

Վերոգրեալ աշխատութեանց յաւելուածաբար,  
պաշտօնիս բերմամբ մասնակցած եմ զանազան  
ձեոնարկներու եւ հանդիսութիւններու։

Յունուր 6, 1986 երկուշաբթի կէսօրէ ետք,  
Վոքիկընի Ս. Գէորգ Եկեղեցւոյ մէջ Միջին-  
արեւմուտքի Հոգեւորականաց դասին հետ մասնակցած  
եմ Ս. ծննդեան Պատարագի արարողութեան։

Էվէնսթընի Ս. Յակոբ Եկեղեցւոյ ծիսական  
Խորհուրդի հրաւերով, Ս. Պատարագ մատուցած  
եւ Հոգեհանգստեան պաշտօն կատարած եմ Հոգեշնորհ  
Տէր Վարուժան Ժ. Վրդ. Բապառածեանի երկու  
քոյրերուն եւ Էեոայրին հոգիներուն ի հանգիստ։

Մասնակցած եմ Սիէնա Սէնթըր Ռէյսին  
Ուկիսքանսըն քաղաքին մէջ գումարուած տարեկան  
հոգեւորականաց ժողովին։

Մասնակցած եմ Երգչախումբերու 40րդ Համա-  
գումարի ժողովներուն որ տեղի ունեցաւ Շիրակոյի  
մէջ։

Ներկայ գտնուած եմ Հայ Աւետարանչական  
շարժման 140րդ եւ Շիրակոյի Հայ Աւետարանչական  
Եկեղեցւոյ հիմնարկութեան 70րդ տարեդարձերու  
հանդիսութեանց։

Հիւրասիրած եմ քաղաքէս հիւրաբար անցնող  
աշխարհական եւ Եկեղեցական հարազատներ, ընկերակ  
ցած եմ անոնց մինչեւ, իրենց մեկնումը Շիրակոյէ։

# Մուրթ Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցի Հայաստանեայց

## ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CHURCH

6700 WEST DIVERSEY AVENUE, CHICAGO, ILLINOIS 60635 TEL: (312) 637-1711

էջ 3

Վիրաբուժական գործողութեան մը համար նոյեմբեր 16, 1986 կիրակի Ս. Պատարագէն ամիջապէս յետոյ, ընդունուած եմ հիւանդանոց կրօս փօէնթ, ինտիանա. Այդ թուականէն մինչեւ Եկեղեցի վերադառնալս, չորս կիրակիներուն, Ս. Եկեղեցւոյս վաստակաւոր, Վարկաւագ Գեղամ Բարսեղեան բաց պահած է Եկեղեցւոյս դուռը եւ խումբ մը դպիրներու հետ կատարած են առաւօտեան ժամերգութիւնները: Տակաւին ապաքինման շրջանիս մէջ ըլլալով հանդերձ վերադարձած եմ պաշտօնիս գլուխ Դեկտեմբեր 14, 1986 կիրակի, եւ առաւօտեան ժամերգութիւն կատարած ենք Ս. Եկեղեցւոյս Դպիրներուն ալ մասնակցութեամբ, այդ թուականներուն Ուրարակիր դպիր Բաֆֆի Հազարեանի օգնութեամբ այցելած ենք հիւանդանոցներ ու տան մէջ եղող հիւանդներու:

Հետեւած եմ Անգլիերէն Լեզուի մասնաւոր դասընթացքներու, ինչ որ կը շարունակուի ցարդ, եւ պիտի շարունակուի յարաջիկային ալ:

Տեղեկագիրս պատրաստուեցաւ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցւոյ Տարեկան ժողովին եւ Թեմիս Բարեխնամ Առաջնորդին համար:

Փետրուար 1, 1987  
Շիրակօ - Իլլինոյ

Վահրամ Զինյ. Հազարեան

